ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 Սեպտեմբերի 2021թ. N 28-Ն

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1.5 ՀԱ ԳՅՈՒՂ. ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Հողային Օրենսգրքի» 76-րդ հոդվածի 3-րդ կետով,«Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 05-025-0114-0194 ծածկագրի (վկայական N13032020-05-0057) 1.5 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը տրամադրել վարձակալության մրցույթով՝ 25 տարի ժամկետով և սահմանել հետևյալ մեկնարկային գինը.
   Գյուղ. Նշանակության հողամաս – 1 հա հողամասի գինը սահմանել 7000 դրամ
2. Համայնքի ղեկավարին.
   Հանձնարարել համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով վարձակալության տրամադրող հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետություն՝ թերթում տալ հայտարարություն մրցույթի անցկացման և սահմանված պայմանների վերաբերյալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:
   4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

Ավագանու անդամներ՝ Ասատրյան Վանիկ Ն.

Կարապետյան Զավեն Ա.

Հակոբյան Արմեն Վ.

Միրզոյան Մարտին Ռ.

Գեղարքունիք համայնքի ղեկավար Ա. Աբրահամյան